

707, և վանորէից՝ 181. բայց ասոնց վրայ կըրնար քանի մ'այլ տեսչընել¹ Յիշեմբ դարձեալ, որ յետ պատմագրութեան ԱրուսաՀլի կայ Յաւելուած թարգմանուած Աւ-Մաքրիզի պատմին (+1441) գրած Եղգպտոսի քրիստոնէից եկեղեցեաց և 72 տեղեաց, 86 վա. նորէից համառօտ պտորագրութիւն²:

Յետ զասոնք յիշելու՝ չեմք կըրնար յիշել խոր զգացմամբ՝ մեր նախնեաց յիշած և յանունէ նշանակած եօթանասունէն աւելի Հայոց վանքերը յԵրուսաղէմ և ի մերձաւոր

տեղիս, զստ յեգիպտականաց, Լուսաւորչի օրերէն մինչեւ ի վերջ 2 դարու՝ շինուած, բնակուած, նորոգուած և կորուած: Միթէ զուտ ազգային հեղինակ մ'այլ՝ ԱրուսաՀլի և Շարուշի նման չէր գրած չափաւորապէս (և աւելի քան զԱնաստաս վարդապետ մեր յիշ դարու³) ասոնց պատմութիւնը. կամ պիտի ըլլայ մէկ մի՝ որ հետաքննէ անոնց անհետացեալ տեղուանքը, և յերևան հանէ անակնկալ և ոչ իսպառ անյուսալի նշխարքն, արձանագրերն, և այլ ինչ գիտեմ:

(Շարայարեի).

ՇԵՐԱՄԱԲՈՒԾՈՒԹԵԱՆ

ՎԵՐԱՑ ՆԱԽԱԿԱՆ ԵԱՆՕԹՈՒԹԻՒՆ

ՄԱՏՈՒԾՈՑ մեծութիւնը ոչ միայն յայտնի կը տեսնուի ի մեծամեծս ալ և ի մանունս: « Երկինք պատմեն զգիւսաւ Աստուծոյ » ըսաւ Սաղմոսեւ. « Զգուէ, տեսնելով պարզ գիշերոյ մթան մէջ բիրաւոր աստղներ՝ կախուած երկնից անհուն տարածութեան մէջ, մին քան զմիւսն մեծ և նուազեղ, որոց առջև երկիրս է իբր հաս մի առաջոյ: Այլ ես կ'ըսեմ, թէ փառաւորեալ է Աստուած և ի մանունս և ի շնչին կարծեցեալ արարածս, որոց մէջ զարմանահրաշ կ'երևին ինչ երկու մասը միմառնեան, Եբրամ և Մեղու, որոց երկուքին ալ գործօն և վաստակաւոր կեանքը, իրենց կանոնաւոր կենցաղավարութիւնը, և առ մարդիկ ունեցած մեծ օգտակարութիւնը, իմ միաբն ապշեցուցած են, և իրենց աշխատաւորութիւնը և անխոնջ ջանքը ինչ օրինակ եղած:

Մին թթենոյ տերեւներէն կազմէ իր ներաթել հիւսուածը, որով արքունիք և տաճարներ կը զարդարուին գոյնազոյն կերպաներով: Միւսն ծաղկանց վրայէն հաւաքելով անուշիկ նեկտարը, յօրինէ մեղր քաղցրահաշակ ի կերակուր մարդկան, և մոմով կը լուսաւորէ Աստուծոյ տաճարները: Երկուքն ալ զարմանալեան արժանի ըլլալով, օւղեցի երկուքին ալ կենաց նկարագրութիւնը ի գրի առնուլ, և առանձին գրեւորելով հրատարակել, յուսալով թէ օգտակար կ'ընան ըլլալ իմ սիրելի ազգիս:

Սկսինք նախ շերամէն: — Եբրամի թրքորը, որ և կ'ըսուի Հնդիկ որդե, մեր բազում խնամոց արժանի եղած է իր օգտակարութեան համար, և վայրենի բնութենէն ընտանի բնութեան վերածուած, մինչդեռ ուրիշ միջատաց թրթուրներն՝ որ կ'ապականեն պարտէշները, արտերը և անտառները՝ կը լանամք ջնջել, Եբրամի թրթուրը կամ որդը աւազալափ ձուէ ծնանելով, և իբր 30 օրուան մէջ հետզհետէ մեծնալով, ու չորս անգամ իր վրայի խորիւր ձգելով և դառնալով ի Հարսաւանակ, կազմէ իր բնակարան

1. Նաբոյի մէջ ոչ 400 եկեղեցիք կային կ'ըսէ ԱրուսաՀլ: ԺՁ դարու համարք մի տեսչով վկայութեամբ գրէր, 160 եկեղեցի կային զիւս վարդապետ բայց ասեալով:

2. Մեծագամայն թարգմանութիւն գրոց ԱրուսաՀլի ծանոթութեամբ: Յաւելուածով, ցանկերով և յտալեալ բանութեամբ 400էն քիչ մ'այլ աւելի երես է: քառասուլ թիւքներով. արաբերէն բնագիրն ուլ 142 երես:

3. Բազմավեղ Լոր Խ. էջ 23:

նը, որ կոչի թոժ, ամենանուրբ թելով մը, որոյ երկայնութիւնն է իբր հինգ հարիւր մետր, և նորա մէջ փակուելով կ'առնու վեր- թին կերպարանափոխութիւնը դառնալով ի թիթթան, իայց քանի որ դեռ թիթթան դար- ձած չէ, կամ թէ ըսել, քանի որ որդը բոժոժին մէջ ծայրէն ծակելով դուրս ելած չէ թիթթան կերպարանօք, մարդիկ կը սպան- նեն որդերը բոժոժներուն մէջ հնոցի տաքու- թեամբ. եւ այս բոժոժներէն կը հանեն զմե- տաքս, թելին մէջ ծայրէն բռնելով և ուր- բելով ճախարակի վրայ, դնելով բոժոժները տաք ջրոյ մէջ քը կը լուծէ իրենց վրայի մա- ծուցիկ նիւթը. իայց որովհետեւ մէն մի բը- ժոժի թելը խիստ բարակ է, չորս հինգ բոժոժներու թելերը ի մի գուգելով այդպէս կ'ոլորեն ճախարակի վրայ, և ելածը կ'ըսուի Մետաքս անգործ, կամ թէ ըսել, առանց հանդերձանաց, որ գեղեցիկ և փայլուն է և միանգամայն զօրաւոր:

Իսկ այն բոժոժներն ուսկից հարսանեակ- ները ծակելով դուրս կ'ելնեն ի կերպարանա թիթթան՝ քիչ օրէն արու և էգ իրարու գու- գելով, և էգը նոր ձուեր ածնելով կը մշտնջե- նաւորեն իրենց ցեղը, և իրենց կը մեծնին:

Ուրիշ ամեն միջնատաց թրթուրներն ալ ի- րենց կերպարանափոխութեան ժամանակ կազ- մեն իրենց բոժոժները, բայց և ոչ միոյն նիւթը օգտակար է, զի խառն և շփոթ է իրենց կազմածը, տկար և փռշտեսակ: Միայն շե- րամին է օգտակար:

Ճերամը կը բաժնուի երեք տեսակ ըստ գունւոյ բոժոժից, որը կը լինին գեղին, կա- նալ և ճերմակ. և այս երեք տեսակները ունին իրենց միջակեալ գոյները որք կը լի- նին խառնածնութեամբ, և կը տարբերին եւ մեծութեամբ բոժոժից:

Շերամի որդը խիստ հին ժամանակէ հե- տէ ծանօթ էր ի ճենաստան, և կը յիշա- տակուի Քրիստոսէ 2600 տարի առաջ, և անկէ մտաւ Ասիոյ արեւմտեան կողմերը Քրի- ստոսէ 200 տարի առաջ, Մարկոս Աւրելիոս կայսեր ժամանակ՝ Քրիստոսի 165 թուակա- նին Հռովմայեցի գետապան մը կրցաւ մտնել ճենաստանի ներսերը, բայց չերամաբուծու- թիւնը իբրեւ գաղտնիք կը պահուէր հոն: Եւ Քրիստոսի 419 թուականին ճենացի

կնոջ մը ձեռքով, որ էր կին Թագաւորին Քո- թանի, մտաւ Հռովմէական երկիրը: Կ'ըս- տի թէ գրեթէ նոյն ժամանակ, այս ինքն 462^{ին} մտած ըլլայ նաեւ Յագոնացոց աշ- խարհին մէջ:

Իսկ թէ երբ մտած է ի Հնդկաստան և ի Պարսկաստան յայտնի չէ ժամանակը, առ- դեօք ճենաստանի ժամանակակից թէ յետոյ, ստուգել չեմք գիտեր:

Վեցերորդ դարուն մէջ, այսինքն 552^{ին}, երկու կրօնաւորաց ձեռքով Պարսկաստանէն եկաւ ի Կ. Պօլսի շերամի ձուեր, զոր խնամեցին սեռա թթենւոյ տերեւներով որ կային հոն: Բայց ոչ Յուստինիանոս կայսրն՝ որ յայնժամ կը թագաւորէր, և ոչ իր յա- լորդներն օգուտ մը քաղեցին ասկէ, կանգ- նելով Բիւզանդացոց կայսերութեան երկրին մէջ մետաքսաբեր գործարան մը, որ կա- ըննար մրցիլ Արեւելքի գործարանաց հետ:

Ութերորդ դարուն սկսաւ ծաղկիլ մե- տաքսագործութիւնն Արաբացոց ձեռքով, ի- ընց բոլոր ընդարձակ տերութեան մէջ, Պաք- սկաստանէն սկսեալ մինչև ի Կովկաս, Սպա- նիա, Սիկիլիա և Ափրիկէի եզերքը տարա- ծեցին շերամի և թթենւոյ մշակութիւնը:

Սիկիլիայէն և Սպանիայէն մտաւ յիտա- լիա և ի Գաղղիա: Շերամաբուծութիւնը 1300^{ին} ժամանակ ծաղկած էր իտալիոյ Մոտենա, Պալերմա և Փլորենտիա քաղաք- ներուն մէջ: Եւ 1360^{ին} Պոնաֆիտոս փա- կանինոս պոլոնիացին հրատարակեց գրուած մը շերամաբուծութեան վրայ: Գրեթէ ի նմին ժամանակի սկսաւ ծաղկիլ շերամաբուծու- թիւնը Գաղղիոյ Ալլիեիրոն, Մոնփելիէ և Մարսիլիա քաղաքներուն մէջ. բայց ինչպէս իտալիա նոյնպէս և ի Գաղղիա եւ թթենւոյ տերեւները կը գործածէին ի սնունդ Հնդկ որդանց: Ճերմակ թթենին շատ ոչ մտաւ յԱրեւելից յԱրեւմուտս: Ճերմակ թթենին 1434^{ին} մտաւ ի Տոսկանա, և 1495^{ին} Կա- րլոս ութերորդի ժամանակ մտաւ ի Գաղ- ղիա, իտալիոյ Նեապոլիս քաղաքէն բերուե- լով:

Գաղղիոյ մէջ Փրանկիսկոս Ա, Կատա- րինէ Մէտիչի և Հենրիկոս Գ տուին մղում մը ճերմակ թթենեաց մշակութեան: Բայց շերամաբուծութիւնը ծաղկեցաւ ի Գաղղիա

Հենրիկոս Գի՞ ժամանակ, որոյ հրամանաւ Օլիվիէ Սէրբէն երեւելի ազարակագէտը հրաւարակեց 1599^{ին} մետաքսի վրայ գրուած մը, և 1601^{ին} բերաւ ի Պարիս 20,000 ճերմակ թըթենի: Եւ թագաւորին հրամանաւ Փաղղիոյ այլ և այլ կողմերը կազմեցան տնկարաններ ճերմակ թըթենեաց, որոցմէ քառասուն տարուան միջոցի մէջ ելան չորս միւլիոն թըթենիներ: Եւ եկեղեցականք ու ազնուականք ամենքն ալ թագաւորին հաճոյ ըլլալու համար կազմեցին թթաստաններ: Բայց մահուամբ թագաւորին (1610) ետ մնաց ձեռնարկեալ գործը. մինչև յիսուն տարիէն վերջ Քուլպէր նոյն կերպով սկսաւ ծաղկեցնել շերամաբուծութիւնը: Եւ այն ժամանակ Փաղղիոյ մէջ կ'ենէր իբր 15,000 հազարաւորամ մետաքս անգործ, որ կը պատասխանէ 200,000 հազարազրամ բոժոժից բերքին: Եւ Թուրի, Լիոնի, Պարիսու գործարանները կ'աճեալին տարին 500,000 հազարազրամ մետաքս անգործ Արեւելքէն, Սիկիլիայէն և Իտալիայէն:

Հետզհետէ սկսաւ ծաղկիլ Փաղղիոյ մէջ շերամաբուծութիւնը, այնպէս որ 1760-ց 1780 Փաղղիոյ մէջ կ'ենէր 400-500 հազար հազարազրամ մետաքս անգործ, որ 1820-ց 1840 հասաւ մի միլիոն հազարազրամի, 1840-ց 1855 երկու միլիոն հազարազրամի, և յետոյ պակսեցաւ հնդկի տրդանց հիւանդութեանց համար. և 1889^{ին} կ'ենէր 600 հազար հազարազրամ անգործ մետաքս, որ կը պատասխանէ ինն միլիոն Հինգ հարիւր հազար հազարազրամ բոժոժից:

Դեռեմք հոս աղիւսակով, թէ 1889^{ին} որչափ բոժոժ կ'ենէր բովանդակ Եւրոպայէն և աշխարհիս չորս կողմէն, մերձաւոր հալուով:

ԵՐՈՊԱ.

Իտալիոս	42,000,000	հազարազր.
Փաղղիոս	9,500,000	»
Աւստրիա, Մանուստան	2,160,000	»
Թուրքաստան Եւրոպոյ	1,500,000	»
Սլոանիա	1,300,000	»
Յունաստան	500,000	»
Լուսիտանիա	250,000	»
Սուեա	210,000	»
Ռումանիա, Պուլկարիստան	170,000	»
Ռուսաստան Եւրոպոյ	120,000	»

57,510,000 »

ԱՍԻԱ.

Ճինաստան	153,160,000	հազարազր.
Յապոնիա	42,580,000	»
Հնդկաստան	35,700,000	»
Միջնաշխարհ Ասիոյ	5,500,000	»
Ռուսաստան Ասիոյ	5,200,000	»
Թուրքաստան Ասիոյ	5,000,000	»
Պարսկաստան	4,500,000	»
Կորէաստան	200,000	»
	307,350,000	»
Աֆրիկէ.	100,000	»
ԱՄԵՐԻԿԱ Հիւսիսային	6,000	»
միջին և հարաւային.	50,000	»
	307,486,000	»

Ուստի բոլոր աշխարհիս մէջ տարին կ'ելնէ 300 միլիոն հազարազրամէ աւելի բոժոժ մետաքսի, ուսկից կը հանեն իբր 20 միլիոն հազարազրամ մետաքս անգործ և 30 միլիոն հազարազրամ թերի, Եւրոպայի մէջ կը գործածուի իբր 10 միլիոն մետաքս թերի, մնացորդն կը գործածուի Ասիոյ մէջ: Եւրոպայի գլխաւոր վաճառատեղին է Փաղղիոս, ուր 8,000,000 հազարազրամ մետաքսի առուտուր կ'ըլլայ տարին:

Եւրոպայի մէջ տարուէ տարի գործածուած անգործ մետաքսին քանակն է

Փաղղիոյ բերք	604,600	հազարազր.
Իտալիոյ »	3,026,260	»
Աւստրիոյ »	194,200	»
Սլոանիոյ »	75,200	»
Արեւելք և Կովկասիոյ	723,600	»
Ճինաստանէ բերուած	3,717,200	»
Գաղթեալ »	1,877,000	»
Հնդկաստանէ »	765,800	»
	10,546,200	»

Կը տեսնուի այս աղիւսակէս որ 10 միլիոն անգործ մետաքսին 6 միլիոն կու գայ Ասիայէն:

Հ. Մ. Քուլպէ.

